**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-21-9/17-10 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **24-ը սեպտեմբերի 2021թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ**-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն **Ա. Դավթյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **16.08.2021թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-21-9/17-10** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***1,966,245 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխա-նատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Դ. Փափազյան 22/14 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1660004154880100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02542882 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | գլխավոր տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Ա. ԴԱՎԹՅԱՆ |

ԱՀ 0123785592
Ա. Դավթյան

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/17-10 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/h | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան՝ 30.10.2021թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 13. | Պիպեկուրոնիումի բրոմիդ, pipecuronium bromide | հատ | 1,500 | 1037.53 | 1,556,295 | 1,500 |
| 15. | Տոլպերիզոնի հիդրոքլորիդ, tolperisone hydrochloride | հատ | 3,000 | 107.85 | 323,550 | 3,000 |
| 34. | Ացետազոլամիդ acetazolamide | հատ | 1,000 | 86.40 | 86,400 | 1,000 |
| **Ընդամենը** | | | | | **1,966,245** | |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/17-10 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/h | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. |
|---|---|---|---|---|
| 13. | **Պիպեկուրոնիումի բրոմիդ m03ac06**/Պիպեկուրոնիումի բրոմիդ, pipecuronium bromide | 33631350/1 | 1,556,295 | 1,556,295 |
| 15. | **Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04**/Տոլպերիզոնի հիդրոքլորիդ, tolperisone hydrochloride | 33631380/1 | 323,550 | 323,550 |
| 34. | **Ացետազոլամիդs01ec01**/Ացետազոլամիդ acetazolamide/ | 33661149/1 | 86,400 | 86,400 |
| **Ընդամենը** | | | **1,966,245** | **1,966,245** |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՑՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ
գլխավոր տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Ան 0123 78592
Ա. Դավթյան